Արձանագրություն N 3
Տնտեսական ապրանքների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/23» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի շարունակության

ք. Երևան

12.12.2017թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Տեր-Թորոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Մարտիրոսյան /գնահատող/, Խ. Կարապետյան /գնահատող/
Ա. Նավասարդյան /բացող/, Ա. Մովսեսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Գների նվազեցման բանակցություններին անցակացման մասին
(Ա. Տեր-Թորոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 39-րդ կետի 5-րդ ենթակետի՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/23» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող գնային առաջարկների նվազեցման բանակցություններին ծանուցված մասնակիցները չեն ներկայացել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/23» ծածկագրով ընթացակարգը որոշ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին

(Ա. Տեր-Թորոսյան)

2.1 Հաշվի առնելով, որ ընթացակարգի 2,7,8,15,19,25,26,29,37,40,41,43 չափաբաժինների մասով հայտ ներկայացրած մասնակիցները չեն ներկայացել բանակցություններին, իսկ 35-րդ և 44-րդ չափաբաժինների մասով հայտ ներկայացրած մասնակցի հայտը գնահատվել է անբավարար՝ հանձնաժողովը որոշեց նշված չափաբաժինները հայտարարել չկայացած:

2.3 Հաստատել չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին ծանուցելու մասին

(Ա. Տեր-Թորոսյան)

3.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 13.12.2017թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

3.2 13.12.2017թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել իրենց կողմից առաջարկվող ապրանքների՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը՝ համաձայն հրավերի 6.1 հավելվածի:

Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակիցներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Տեր-Թորոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված փաստաթղթերի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Ա. Տեր-Թորոսյան

Անդամներ՝ ..... Ա. Մարտիրոսյան

..... Խ. Կարապետյան

..... Ա. Նավասարդյան

..... Ա. Մովսեսյան

Քարտուղար՝ ..... Ա. Համբարձումյան